

Կարծիք

Մարտին Գեղամի Տոնիկյանի «Ակտիվների որակի կարգավորման արդիականացումը ՀՀ բանկային համակարգում» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.08.00.03 - «Ֆինանսներ, Հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Արենախոսության թեմայի արդիականությունը

Ժամանակակից տնտեսության զարգացումը դժվար է պատկերացնել առանց փողի շուկայի լավագույն միջնորդի՝ բանկերի և բանկային կարգավորումների գոյության: Բանկերը կոչված են իրականացնելու սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված այնպիսի երկարաժամկետ ծրագրերի ֆինանսավորում, որը չի կարող ամբողջությամբ իրականացվել մասնավոր բիզնեսի կողմից: Բանկային կարգավորումները կարևոր դեր են խաղում երկրի ֆինանսական համակարգերի և շուկաների գործունեության արդյունավետության ապահովման գործում: Բանկային ակտիվների կառավարման մեթոդները, տարիների ընթացքում էական փոփոխությունների են ենթարկվում՝ իրենց վրա կրելով տնտեսական աճերի, անկումների, ինչպես նաև ճգնաժամերի ազդեցությունը: Իսկ մյուս կողմից, բանկային կարգավորումներն իրականացվում են ելնելով՝ տնտեսական զարգացումների ընթացքում առաջացած խնդիրների լուծման կարևորությունից:

Վերջին երկու տասնամյակների ընթացքում բանկային ոլորտում տեղի ունեցած իրադարձությունները՝ կապված 2007-2008 թվականների ճգնաժամերի հետ, 2020 թ. և այլն, ցույց տվեցին Բանկի կայուն գործունեության համար ակտիվների որակի և իրացվելիության վերլուծության, ինչպես նաև կառավարման նոր մոտեցումների բացահայտման կարևորությունը, դրանց հետազոտության արդիականությունը:

Բանկային համակարգի կառավարման մակարդակի բարելավման և արդյունավետության ապահովման գործընթացում առանձնահատուկ տեղ է գրավում ակտիվների որակը, դրա բաղադրիչները, վարկային ռիսկերի աստիճանը, աշխատող և չաշխատող վարկերի համամասնական հարաբերակցությունը և այլն:

Բանկային ակտիվների կառավարման տեսանկյունից կարեւոր դեր է հատկացվում նաև միջազգային և տեղական կարգավորիչներին, որոնք հիմնականում տարբեր երկրների կենտրոնական բանկերն են, որոնք շատ դեպքերում ղեկավարվում են այնպիսի նորմատիվ ակտերով, ինչպիսիք են օրինակ՝ Բազել II և III-ը: Բացի դրանցից, կարևոր դերակատարում է վերապահված նաև այնպիսի կազմակերպությունների, ինչպիսիք են «Բանկային միությունը», «Ֆինանսական կայունության խորհուրդը», «Ապահովագրական ընկերությունների կարգավորիչների միջազգային ասոցիացիան», «Արժեթղթերի հանձնաժողովների միջազգային կազմակերպությունը»:

Այս առումով, ակտիվների որակի արդիականացման, որակի գնահատման և զարգացման մոդելների մշակման, ինչպես նաև այս ոլորտում մեթոդական գործիքների կատարելագործմանն ուղղված համապարփակ հետազոտությունների անհրաժեշտությունը կանխորոշեց թեմայի ընտրությունը:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները

Ատենախոսության նպատակն է ՀՀ-ում բանկային համակարգի ակտիվների որակի կարգավորման արդիականացման մոդելների մշակումը:

Ուսումնասիրության նպատակին հասնելու համար սահմանվել են հետեւյալ խնդիրները:

1. Գիտական աղբյուրների վերլուծության հիման վրա ուսումնասիրել խնդրի զարգացման աստիճանը, հստակեցնել խնդրի սահմանները:

2. Որոշել բանկերի հուսալիության քանակական և որակական բնութագրերը, բանկային կայունության վրա տարբեր մոդելների ազդեցության մեխանիզմները:

3. Ուսումնասիրել աշխարհում և, մասնավորապես, Հայաստանում բանկային համակարգի ակտիվների որակի գնահատման ներկա վիճակը:

4. Ուսումնասիրել ակտիվների որակի մակրո և միկրոտնտեսական չափորոշիչները, որոնք թույլ են տալիս կանխատեսել չաշխատող վարկերի դինամիկան ինչպես ընդհանուր, այնպես էլ ճգնաժամային իրավիճակներում:

5. Իրականացնել տվյալների հարաբերակցության, ռեգրեսիայի, համեմատական և էքստրապոլյացիայի վերլուծություն:

6. Մշակել մոդելներ՝ ուղղված բանկային համակարգում ակտիվների որակի գնահատման արդիականացմանը:

Հիմնական գիտական արդյունքները և հեղազոտության նորույթը

Ատենախոսական հետազոտության գիտական նորույթ պարունակող ամենակարևոր արդյունքները հետևյալն են՝

- Մշակվել է մոդել՝ ՀՀ բանկային համակարգի ակտիվների որակի արդիականացման համար՝ օգտագործելով ռեգրեսիոն և կորելյացիոն վերլուծություն:
- Մշակվել է մեթոդաբանություն՝ ակտիվների որակի վրա ազդող Մակրո և միկրոտնտեսական ցուցանիշների բացահայտման համար: Աշխատությունը ցույց է տալիս, որ առկա է զգալի տարբերություն՝ երկրների և տնտեսությունների համար հիմնական ազդեցությունը բնութագրող ցուցանիշների միջև, ինչպես նաև տարբեր երկրներում դրանց ազդեցության դինամիկ փոփոխությունը տարբեր է: Հաստատվել է նաև այն փաստը, որ չաշխատող վարկերը սերտորեն կապված են տնտեսության բիզնես ցիկլերի, ինչպես նաև կենտրոնական բանկի քաղաքականության հետ, ինչի պատճառով տարբեր երկրներում չաշխատող վարկերի հաշվարկման նույն մեթոդաբանությունը Հայաստանի համար կիրառելի չէ:
- Դիտարկվել է կապ՝ ակտիվների աճի տեմպի և չաշխատող վարկերի քանակի միջև, որից հետո առաջարկվել է ակտիվների աճի տեմպը սահմանափակելու գործիք, հատկապես համակարգաստեղծ խոշոր բանկերի համար: Առաջարկվում է նաև խթանել սեփական կապիտալում ավելի մեծ ներդրումները՝ կապիտալի աճի սահմանափակումները մեղմելու համար համար՝ դրանով իսկ ավելացնելով կապիտալի բուֆերների չափը:
- Սահմանվել են ակտիվների որակի կարգավորման պրոակտիվ մոդելի մշակման մեխանիզմները՝ բանկային ստանդարտների դինամիկ փոփոխություններով:
- Հիմնավորվել և ցուցադրվել է CAMEL համակարգի կիրառման արդյունավետությունը Հայաստանի բանկերի ակտիվների որակի ռեյտինգային գնահատման մեջ, մինչդեռ ոչ ռեյտինգային գնահատման դեպքում CAMEL մեթոդը սուբյեկտիվ է և չի արտացոլում ակտիվների որակի իրական պատկերը:

- Առաջարկվել է բանկերի համարժեքության գնահատման մոդել ' ՀՀ բանկերի նկատմամբ կիրառելի վարկանիշային գնահատման հիման վրա:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ներածության մեջ հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը, ձևակերպված են ուսումնասիրության նպատակը և հիմնական խնդիրները, սահմանված են աշխատանքի արդյունքների գիտական նորոյթը ու գործնական նշանակությունը, ինչպես նաև եզրակացությունները և առաջարկները:

Ատենախոսության առաջին՝ **«Ակտիվների որակի վերլուծության տեսական հիմքերը բանկային համակարգի կայունության և հուսալիության մեջ»** գլխում քննարկվել են՝ բանկային կայունության և հուսալիության էությունն ու հայեցակարգը, բանկային համակարգի կարգավորումը, միջազգային և տեղական կարգավորիչները, վերլուծություն՝ ֆինանսական հաստատությունների կարգավորման չափանիշների և ցուցանիշների մասին, վերլուծություն՝ հայեցակարգային ապարատի և ակտիվների որակի էության մասին, ակտիվների որակի կարգավորման մեթոդների վերլուծություն և Camels մոտեցումը:

Ատենախոսության երկրորդ՝ **«Բանկային համակարգում ակտիվների որակի կարգավորման առկա մեխանիզմների և մոդելների վերլուծություն»** գլխում ներկայացվել է վերլուծություն՝ ժամանակակից աշխարհում առկա իրացվելիության ծուղակի մասին, Հայկական բանկերի համեմատական վերլուծություն, Հայաստանի որոշ բանկերի կայունության վերլուծություն CAMELS մեթոդի կիրառմամբ: Բացի այդ, քննարկվել է ակտիվների որակի որոշիչները բանկային համակարգում և բանկերի միկրոպրոդեսնցիալ կարգավորումն ու դրա բարելավման ուղիները:

Դիպրոզություններ ատենախոսության վերաբերյալ

Աշխատանքը գերծ չէ նաև թերություններից: Մասնավորապես՝

- Աշխատանքը ավելի հետաքրքիր կլիներ, եթե ներկայացվեր Հայաստանի բանկային ակտիվների կառավարման և ֆինանսական համակարգի կայունության նկարագիրը՝ ըստ որոշակի տարիների: Նման դիտարկումները հնարավորություն կտար ավելի հստակ բացահայտել ֆինանսական համակարգի խնդիրները և առարկայական դարձնել դրանց լուծման տարբերակները՝ հաշվի առնելով տվյալ ժամանակահատվածի մակրոտնտեսական իրավիճակի առանձնահատկությունը:
- Ակտիվների կառավարման հիմնահարցերի ուսումնասիրության համատեքստում, բավարար ուշադրության չեն արժանացել դոլարիզացիայի պայմաններում ՀՀ բանկային համակարգի ակտիվների կառավարման առանձնահատկությունները և ոլորտում առաջացող խնդիրներն և ռիսկերը:
- Աշխատանքում անդրադարձ չի արվել ակտիվների կառավարման ոլորտում վերջին երկու տարիների զարգացումների մեկնաբանությանը, որոնք իրենց բնույթով աննախադեպ են, և բանկային ակտիվների կառավարման նոր մոտեցումներ են պահանջում: Մասնավորապես, նկատի է առնվում այն, որ վերջին մեկ տարվա ընթացքում բանկային համակարգում արձանագրվել է ավանդների զգալի աճ, որի պայմաններում բանկային ակտիվների արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ կլինի կիրառել իրավիճակին համապատասխան՝ նոր մոտեցումներ:
- Ակտիվների կառավարման որակի բարձրացման և բանկային ակտիվների կառավարման վրա հետագա ճգնաժամերի հնարավոր ազդեցությունների

մեղման նպատակով, նպատակահարմար կլիներ, որ հեղինակը վերլուծեր և ներկայացներ միջոցառումների համալիր ծրագիր, որի շնորհիվ հնարավոր կլինի մեղմել՝ բանկային համակարգի ակտիվների վրա Ֆինանսատնտեսական ճգնաժամերի բացասական հետևանքները:

Եզրակացություն

Բովանդակության հիման վրա կարելի է եզրակացնել, որ ատենախոսությունը իրենից լուրջ հետազոտական աշխատանք է ներկայացնում, ինչի մասին վկայում են ուսումնասիրության վերջում ներկայացված արդյունքները: Աշխատանքում օգտագործված տեսական, մեթոդաբանական և գործնական մոտեցումները, այնպես ինչպես ուսումնասիրության ընթացքում ստացված արդյունքները, գիտականորեն հիմնավորված, համոզիչ և ընդունելի են: Հետազոտության արդյունքում առաջադրված առաջարկությունների կիրառումը կարող է էական ազդեցություն ունենալ բանկային համակարգի ակտիվների կառավարման բարելավման վրա:

Այս աշխատանքի ինքնուրույնությունը, ամբողջականությունն ու արժեքը, հետազոտությունում օգտագործված հարուստ տեսական և գործնական նյութերը թույլ են տալիս եզրակացնել, որ ատենախոսությունը արժանի է բարձր գնահատականի:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը և իր մեջ ներառում է հիմնական պայմաններն ու արդյունքները: Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են յոթ գիտական հրապարակումներում:

Մարտին Գեղամի Տոնիկյանի «Ակտիվների որակի կարգավորման արդիականացումը ՀՀ բանկային համակարգում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ԲՈՒՀ-ի կողմից թեկնածուական ատենախոսության համար ներկայացված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.08.00.03 – «**Ֆինանսներ, Հաշվապահական հաշվառում**» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

**Պաշտոնական ընդդիմախոս՝
տնտեսագիտության թեկնածու,**



Մ. Ս. Գրիգորյան

**Մ. Ս. Գրիգորյանի ստորագրության իսկությունը
հաստատում եմ՝**

02 մարտի 2023 թ.